

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԻ ՍԵՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԻ ՍԵՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Շ. ԾԱՌՈՒԿՅԱՆ

Հայերենի XVII դարի քերականները լուրջ ուշադրություն են նվիրել բայի քերականական կարգերի, այդ թվում նաև սեռի ուսումնասիրությանը, բացառությամբ Ռիվոլայի:

Թեև նրանք բոլորն էլ նկատել են բայական սեռի կարգը, բայց նրանց պատկերացումներն այդ հարցում տարբեր են:

Բայի սեռը Սիմեոն Զուղայեցին անվանում է սեռ: Հայտնի է, որ մինչ այդ Թրակացու երկի թարգմանիչը և հայ մեկնիչները քերականական այդ կարգն անվանել են տրամադրություն: Ունեն նաև սեռ (թարգմանիչը) և սեռ (Դավիթը) տերմինները¹: Բայց սրանք գործածում են ոչ թե բայական, այլ անվանական սեռը նշելու համար: Այն լեզուները, որոնք միաժամանակ ունեն և՛ բայական, և՛ անվանական սեռ, բնականաբար, դիմում են տարբեր տերմինների. հունարենն ունի ἰσχυρὸς անվան և ἄνθρωπος բայի սեռի համար, ռուսերենը՝ род և залог: Հայերենը դրա կարիքը չունի, որովհետև չունի անվանական սեռ: Զուղայեցին էլ, հավանաբար, Թրակացու հայ թարգմանիչ է վերցրել սեռ տերմինը՝ բայական սեռը անվանելու համար:

Կղեմես Գալանոսի մոտ արդեն գործածվում է սեռ ձևը, ինչպես այն տեսնում ենք Դավթի մոտ: Հաջորդ հեղինակները օգտագործում են միմիայն սեռ անվանումը: Ռիվոլայի մոտ դարձյալ նույնն է՝ genus, որը հայերեն կլինի սեռ:

Սեռերի համար Զուղայեցին ունի երեգործական, կրավորական, ընդմիջական և հասարակ անվանումները: Սրանցից երեքը նա վերցնում է թարգմանից, իսկ ընդմիջականը կազմել է ինքը՝ նրա «միջին»-ի դիմաց (ընդ-միջ-ական)՝ պահպանելով «միջին» իմաստը: «Հասարակ» անվանումը նրա մոտ դարձյալ գոյականների (շնչավոր) սեռը նշող տերմին է: Թարգմանի մոտ այդ անվանումներից երկուսը («սեռագործություն», «կիր») ունեն գոյականական ձև, բայց Զուղայեցու մոտ դրանք ստացել են ածականական ձև: Հետագա բոլոր քերականները օգտագործում են միայն ածականական անվանումներ: Գալանոսն ավելի հեռուն է գնում՝ հասարակ-ը կոչելով հասարակական, չեզոք՝ չեզոքական. վերջին անվանումը նա վերցնում է մեկնիչներից: Գոյականների սեռերից մեկը թարգմանիչն անվանում է չեզոք, իսկ Դավիթը՝ չեզոքական²: Գալանոսն արդեն այս տերմինով է նշում բայի չեզոք սեռը: Ստացվում է, որ Զուղայեցին առավելապես հետևում է թարգմանի, իսկ Գալանոսը՝ Դավթի անվանումներին: Գալանոսը մտցնում է նաև «ծալնակալական» անվանումը՝ կրավորաձև չեզոք բայերի համար:

Ոսկանը գործածում է արտագործական (ներգործականի փոխարեն) և իրացրեկեցիկ անվանումները, որոնցից վերջինը՝ ի ծորություն կրկնասեռ բայերի համար: Նա «ներգործական» անվանումը հատկացնում է բայերի իմաստա-սեռային մի խմբի՝ հոգեվիճակ ցույց տվող որոշ բայերի (տրամեմ. ուրախանամ և այլն):

Այս դարի քերականների մոտ չենք հանդիպում բայական սեռի ընդհանուր բնութագրման որևէ փորձի: Զուղայեցին նույնիսկ չի բնութագրել առանձին սեռերը, այլ բավարարվել է առանձին սեռերի թվարկումով: Նա ընդունում է բայի չորս սեռ. «Սեռք չորք. ներգործական, կրավորական, ընդմիջական, հասարակ»³, և բերում է օրինակներ: Չեզոք սեռի բայերը, սակայն, նա

¹ См. Н. Адонца, Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград., 1915, стр. 13, 103.

² Ա դ ո ն ջ, նույն տեղում, էջ 103:

³ Զ ո լ ա յ ե ջ ի, Գիրք Եր Կոչի քերականութիւն, Կոստանդնուպօլիս, 1725, էջ 64:

բաժանում է երեք ենթատեսակի. «Այլ ընդմիջականացն տեսակք են երեք՝ ներգործակերպ, կրաւորակերպ, երկատեսակ, ներգործակերպք են՝ որք բոլորովին ըստ ներգործականացն հոլովին, եւ կրաւորակերպք՝ որք կրաւորականացն, իսկ երկատեսակք են՝ որոց ներկայն և անկատարն⁴ ըստ ներգործականացն հոլովին, իսկ այլ ամանակքն՝ ըստ կրաւորականացն⁵»։ Թե ինչպիսի բայերն է անվանում ներգործակերպ և կրավորակերպ «ընդմիջականք», դա պարզ է, իսկ ի՞նչ է հասկանում «երկատեսակ» ասելով։ Թեև այստեղ օրինակներ անմիջապես չեն դրված, բայց խոնարհման բաժնում արդեն օրինակներ կան. ներգործակերպ շեզոֆ՝ եռամ, զնամ, մնամ, խնդամ, կրավորակերպ շեզոֆ՝ անկանիմ, ապրիմ, բուսանիմ, մեռանիմ, նստիմ, սնանիմ, երկատեսակ՝ դոգամ, զօրանամ, էանամ, ընթանամ, ժրանամ, ծանրանամ, ձանձրանամ, լողամ և այլն։ Ուրեմն «երկատեսակ» շեզոֆ է անվանում Ա լծորդության այն շեզոֆ բայերը, որոնք ներկայի հիմքից կազմվող ձևերում կարող են խոնարհվել ներգործաձև, իսկ կատարյալի ձևերում՝ կրավորաձև⁶։

Ջուղայեցին նույն շորս սեռը առանձնացնում է նաև դերբայների մեջ. «ներգործական, դնօղ, դնիշ, եղեալ, դնելոց, կրաւորական, դրօղ, դրեալ, գրելի, գրելոց»⁷, ընդմիջական, բնակօղ, բնակիշ, բնակեալ, Հասարակ, դատօղ և դատեալ, ընդունօղ և ընկալեալ⁸։

Բայի սեռի իմաստների ու առանձնահատկությունների մասին Ջուղայեցին խոսում է բայերի խնդրառության բաժնում։ Մանրամասնորեն քննելով տարբեր սեռերի հոլովառության այլևայլ դեպքեր՝ նա նկարագրում է նաև սեռային-քերականական իմաստների հետ կապված հոլովառության փաստերը։ Օրինակ՝ նա նկատել է, որ ներգործական սեռի հիմնական կիրառությունը «հայցական անուն» (ուղիղ խնդիր), կրավորականինը՝ «սկզբնական անուն» (ներգործող անուղղ. խնդիր), շեզոֆինը՝ «նախդիր տրական» (հանգման, մատուցման խնդիր) և «սկզբնական անուն» (տեղի պարագա) ընդունելն է և այլն։

Նշենք, որ Ջուղայեցուց հետո հայ քերականագիտության մեջ ավանդաբար ընդունվում է բայի ճաստարակ սեռ։ Առաջինը Ստ. Մախասյանցն է մերժում այդպիսի սեռը, սակայն առանձնացնում է հասարակ բայերի խումբ։ Դրանք «միևնույն ձևով ունին թէ ներգործականի և թէ կրավորականի նշանակութիւն»⁹։

Այնուհետև, Մ. Աբեգյանը ևս նշում է «հասարակ իմաստով» գործածվող բայեր, որոնց «ներգործական կամ կրավորական լինելը» «ամտքից և կիրառութիւնից միայն պիտի հասկացուի», ինչպես՝ սկսանիմ, զողանամ, ճեղում և այլն¹⁰։ Նա նկատի ունի և՛ ավանդաբար ճաստարակ համարվածները, և՛ Ա, Ու լծորդությունների որոշ ներգործական բայեր, որոնք մի քանի ժամանակներում ունեն խոնարհման ընդհանուր ձևեր։

Ս. Ղաղարյանը նույնպիսի մոտեցմամբ «մի շարք բայեր» անվանում է ճաստարակ՝ ընդունելով երեք սեռ։ Մ. Ասատրյանը իրավացիորեն նշում է, որ հասարակ բայերը «առանձին սեռ չեն կազմում», դրանք ըստ գործածության պատկանում են կամ ներգործական, կամ կրավորական սեռին, նրանց սեռային իմաստը արտահայտվում է ոչ թե ձևաբանորեն, այլ շարահյուսորեն. նա վկայակոչում է գրաբարի Ա, Ու, մասամբ Ե լծորդության՝ ընդհանուր սեռային իմաստ ունեցող ժամանակների գոյության փաստը¹¹։

Գրաբարի հասարակ բայերի սեռային նշանակության ըմբռնման հարցին լույս է սփռում պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանի՝ բայական կրկնասեռության վերաբերյալ կատարած ուսումնասիրությունը։

4 Պետք է ավելացնել նաև ներկայի հիմքից կազմվող մյուս ժամանակները՝ ստորադասականի առաջին ապառնին և հրամայականի արգելականը։

5 Նույն տեղում, էջ 66—67։

6 Այստեղ խոսքը Ա լծորդության այն պարզ բայերի մասին չէ (բացի ղողամ բայից), որոնք կատարյալի հիմքի ձևերում կարող են խոնարհվել և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև, ինչպես՝ զոռամ-զոռացի // զոռացայ, ողբամ-ողբացի // ողբացայ և այլն, այլ նկատի են առնվել ածանցավոր բայերը։

7 Աստղանիշով տրված ձևերը արհեստական են։

8 Ջ ու ղ ա յ ե ց ի, նույն տեղում, էջ 112։

9 Ս տ. Մ ա լ խ ա ս ե ա ն ց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, էջ 31։

10 Մ. Արեղյան, Գրաբարի համառոտ քերականութիւն, Վաղարշապատ, 1907, էջ 54։

11 Մ. Ասատրյան, Բայի սեռը ժամանակակից հայերենում, 1959, էջ 25—26։

Նա գրում է. «Ժամանակակից հայերենի բայական համակարգում զգալի թիվ են կազմում այնպիսի բայերը, որոնց մեջ սեռային հատկանիշը միատարր չէ: Այդ բայերը համապատասխան բայական բառաձևի մեջ միաժամանակ համատեղում են երկու սեռ՝ առաջ բերելով սեռային զուգահեռություն: Այդ բայերը ժամանակակից հայերենում կարելի է կոչել կրկնասեռ բայեր»¹²։

Ըստ որում կրկնասեռությունը դրսևորվում է ներգործական և չեզոք սեռային իմաստների համատեղումով։ Սակայն այդ իմաստներից մեկը ավելի «իշխող» է լինում։

Դիտելով այս տեսանկյունից՝ կարելի է ասել, որ կրկնասեռությունը ավելի կայուն օրինաչափություններով առկա է գրաբարում և իր արտահայտությունն է գտնում ճառարակ բայերի մեջ։ Այդպիսի բայերը կազմում են մի առանձին խումբ և սեռային իմաստի հարցում դրսևորում են որոշակի երկակիություն։ Չնայած միևնույն արտահայտության մեջ նրանք միայն մեկ իմաստ (կա՛մ ներգործական, կա՛մ կրավորական) են ունենում, այնուամենայնիվ անառարկելի է նրանց մեջ կրկնասեռության հանգամանքը՝ որոշ յուրահատկությամբ։ Ուստի, դրանք պետք է դիտել իրրև կրկնասեռ բայեր, իրրև կրկնասեռության յուրահատուկ դրսևորում ունեցող բայերի խումբ։

Ի տարբերություն ժամանակակից հայերենի կրկնասեռ բայերի, որոնք համատեղում են ներգործական և չեզոք սեռերի իմաստները, հասարակ բայերը միևնույն ձևում համատեղում են ներգործական և կրավորական իմաստները։ Սակայն կան և՛ ներգործական, և՛ չեզոք իմաստ ունեցողներ, որոնք ներգործական են։ Հասարակ բայերի հետ նույնը չեն սեռային իմաստով ընդհանուր ժամանակներ ունեցող բայերը (Ա, Ու լծորդություններ), որովհետև ընդհանուր ժամանակների կողքին նրանք, այնուամենայնիվ, ունեն նաև առանձին մեկ սեռի ձևեր (աղայցեմ-աղայցիմ, աղացի-աղացալ, աղա՛, աղացե՛ք-աղացի՛ր, աղացա՛յք), իսկ հասարակ բայերը ունենում են կրավորական ձև։ Իհարկե, առաջինները ևս ընդհանուր ժամանակներում «հասարակ»՝ ընդհանուր սեռի, այսինքն՝ կրկնասեռության իմաստ են դրսևորում։

Գալանոսն արդեն ընդունում է վեց սեռ՝ ավելացնելով «ձայնակրականը» և «անցողականը»։ «սեռք են վեց. ներգործական. կրավորական. չեզոքական. հասարակական. ձայնակրական. անցողական»¹³։

XVII դարում Գալանոսն առաջինն էր, որ փորձում է բնութագրել բայի առանձին սեռերը։ Սակայն նա երբեմն հենվում է ձևային-ձևաբանական, երբեմն էլ իմաստային հատկանիշների վրա։ Այսպես. նա բացարձակապես ձևային կողմով է բնութագրում ներգործական և կրավորական սեռերը. «բայ ներգործական՝ է որ աւարտի յեմ կամ լում և կարող է փոփոխիլ յիմ և առնել յինքենէ զկրավորականն... Կրավորականն՝ է որ աւարտի յիմ և կարող է փոփոխիլ յեմ, կամ լում և լինիլ ներգործական»¹⁴։ Այստեղ սեռային իմաստի մասին խոսք անգամ չկա։ Այս երկու սեռերը բնորոշող միջոց են համարվում նրանց դիմային վերջավորությունները, ինչպես և այն, որ ներգործական սեռի բայերը կարող են վերածվել կրավորական սեռի, առնել յինքենէ զկրավորականն՝ ներգործական բնույթի վերջավորությունը փոխելով կրավորականի։ Նշելով, որ կրավորական սեռի բայերն էլ իրենց հերթին կարող են վերածվել ներգործականի, Գալանոսն այդտեղ սխալվում է, որովհետև նախ՝ կրավորական բայերը ոչ թե բառային սկզբնաձևեր են, այլ ածանցյալ։ Նրանք կազմվում են ներգործական բայերից¹⁵, հետևաբար առանձին բառեր, «բառաբանային միավորներ» չեն, այլ տվյալ բայական բառույթների բառաձևեր։ Նթե կրավորական բայերն, իրրև կանոն, կազմվում են ներգործականներից, ապա ներգործականները չեն կազմվում կրավորականներից։ Ովքեր կրավորականները համարում են առանձին բառեր, փաստորեն հենվում են ոչ թե բառային, այլ սեռային, քերականական իմաստի վրա։

Գալանոսի՝ ներգործական և կրավորական սեռերի այսպիսի բնորոշման մեջ դեր ունի նաև այդ երկուսի իմաստային փոխազդեցությունը, որոշ «ազգակցությունը» ըստ կրավորական սեռի բայերի կազմավորման, այսինքն՝ այն, որ վերջիններս չեն զիտակցվում իրրև առանձին բառեր, այլ՝ իրրև ներգործական բայերի փոփոխված ձևեր։

Ներգործական սեռի այսպիսի բնութագրությունը հանգեցրել է նաև մի այլ սխալի։ Այդ բայերի շարքից դուրս է թողնվել Ա լծորդությունը։ Չէ՞ որ Գալանոսի կարծիքով ներգործական

¹² Ա. Ա. Արբա համայան, Ժամանակակից հայերենի բայական կրկնասեռության երևույթի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 5, էջ 81։

¹³ Կ. Գալանոս, Քերական և տրամաբանական ներածություն առ յիմաստասիրութիւն շահելոյ, Հոռմ, 1645, էջ 54։

¹⁴ Նույն տեղում, էջ 54—55։

¹⁵ Նկատի ունենք հիմնական օրինաչափությունները և ոչ մասնավոր դեպքերը։

բայը կրավորականի վերածվելիս պետք է իր լծորդը փոխի Խ-ի, իսկ դա իբր թե հատուկ է միայն և և Ու լծորդությունների, բայց ոչ Ա լծորդության բայերին: Այս ձևով վարվելով՝ նա չպետք է նշեր նաև Ու լծորդության բայերը: Սակայն քերականը դրանց համար ստեղծում է արհեստական կրավորական ձևեր (ընթեռնուիմ, առնանիմ, քողուիմ): Մյուս սեռերը բնութագրելիս Գալանոսն արդեն ուշադրություն է դարձնում նաև սեռային-քերականական իմաստին, իհարկե, չանտեսելով ձևաբանական հատկանիշը: Այսպես, օրինակ, չեզոք սեռը բնութագրելիս շեշտը դնում է իմաստային առանձնահատկության վրա. «Չեզոքականն՝ է որ անզի յամ. կամ լեմ. կամ յում. և ոչ կարէ լինել իմ կրաւորական. այլ նշանակէ զներգործութիւն մնացական ի յինքն ներգործողին»¹⁶ (ընգծումը իմն է —Վ. Մ.): Քանի որ «ներգործութիւն» այստեղ նշանակում է գործողություն, իսկ ներգործող՝ գործող, ուրեմն, ըստ Գալանոսի՝ չեզոք սեռին հատկանշական է այն, որ բայի արտահայտած գործողությունը տվյալ գեպքում մնում է գործողություն, կատարողի վրա, այսինքն՝ չի անցնում մեկ ուրիշ առարկայի: Սակայն Գալանոսը Խ լծորդության չեզոք բայերը առանձնացնում է իբրև ուրույն՝ «ձայնակրական» սեռի բայեր: Սրա պատճառը զարձալ այն է, որ թերևս ձևային հատկանիշին և քերականական իմաստին տրվում է հավասար նշանակություն (մանավանդ որ այս բայերի սեռային իմաստը նա որոշակիորեն նկատել է): «Ձայնակրականն՝ է որոյ ձայնն միայն է իմ կրաւորական. իսկ նշանակութիւն՝ չեզոքական»¹⁷: Նա պատճառական բայերը «անցողական» սեռ է համարում:

Այս սկզբունքով սեռերը որոշելիս՝ Գալանոսը որոշ վրիպումներ է կատարում. զգենում բայը համարում է չեզոք, խօսիմ, ունիմ՝ «ձայնակրական», այսինքն՝ կրավորաձև չեզոք, իսկ պատճառական բայերը, ըստ նրա տեսակետի, չեն կարող ունենալ կրավորական ձևեր, թեև ցույց են տալիս ներգործական գործողություն (ենշանակէ զներգործութիւն անցեալ յայլս): Ստացվում է հակասություն. պատճառական բայը ներգործական նշանակություն ունի, բայց չի կարող ունենալ կրավորական ձև:

Նա զրաբարի հասարակ բայերը ևս առանձին սեռ է համարում և բնութագրում է ձևային-իմաստային հատկանիշների համաձայն, մատնանշելով, որ այդպիսի բայերը առանց ձևական տարբերության կարող են ցույց տալ և՛ ազդող, ներգործող, և՛ կրավորական բնույթի գործողություն. «Հասարակականն՝ է որ միով ձայնիւ նշանակէ զառնել և զկրել»¹⁸: Սակայն նա, ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, հասարակ բայերի մեջ մտցնում է նաև այնպիսի կրկնասեռ բայ, որն ունի ներգործական և չեզոք սեռի նշանակություն (քիսել):

Գալանոսը դերբայների սեռը այլ ձևով է ներկայացնում, նրանց մեջ առանձնացնելով ոչ թե վեց, ինչպես վարվել էր բայերի սեռի հարցում, այլ չորս սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոք և հասարակ: Նա փորձում է օրինաչափություններ գտնել դերբայների մասնիկների միջոցով ստացվող սեռային իմաստների մեջ և աշխատում է ըստ մասնիկների որոշել դերբայների սեռը: Բայց, ինչպես երևում է նրա բերած օրինակներից, որոշ դերբայների սեռը նա որոշում է ըստ մասնիկների, ուրիշներինը՝ ըստ բայական իմաստների: Ոսկանը զրաբարում առանձնացնում է հինգ սեռ՝ «արտագործական, կրաւորական, չեզոքական և իրացնելկեան» («արտագործական. անվանում է ներգործական սեռը, իսկ «իրացնելկեան»՝ Խ լծորդության կրկնասեռ բայերը՝ խօսիմ, տանիմ, սկսանիմ և այլն):

Նա ներգործական, կրավորական և չեզոք սեռերը միմյանցից զանազանում է միմիայն ձևական-ձևաբանական հատկանիշներով, իսկ նշանակությունը, իմաստային կողմը անտեսում է¹⁹: Հետևելով Գալանոսին՝ նա ևս միմյանց հակադրում է ներգործական և կրավորական սեռի բայերը, շեշտելով, որ առաջիններն ունենում են ներգործական տիպի վերջավորություններ՝ եմ, ում, ամ, որ փոխում են կրավորականի՝ իմ, նիմ, անիմ²⁰, և հակառակը. «Արտագործական է, որ իյեմ վերջանայ, և յիմ փոխարկեալ կրաւորական լինի, և կամ ի յում և կրաւորական. անիմ, Կամ ամ, և կրաւորականն, նիմ, Ո՞րդան. սիրեմ, ըես. ըէ, որոյ կրաւորական է: Սիրիմ. ըիս. ըի: Առնում. առնուս. նու: Որոյ կրաւորական է. առնանիմ, առնանիս, նանի: Բառնամ. բառնաս.

¹⁶ Գալանոս, նույն տեղում, էջ 55:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Այստեղ նկատի չունենք նրա կատարած մի այլ՝ բառիմաստային-սեռային բաժանումը՝ Դրա մասին կխոսենք քիչ հետո — Վ. Մ.:

²⁰ Վերջին երկուսը՝ Ու և Ա խոնարհման բայերի համար: Սա սխալ է և լատինաբանության արդյունք, որովհետև ձգտում է պարտադիր ձևով կրավորական ձևեր կազմել բոլոր բայերի համար, մի բան, որն օրյեկտիվ իրողություն չէ զրաբարի համար:

նայ...: Բառնիմ. բառնիս. բառնի... կրաւորական է, որ յիմ. վերջանայ և զարտագործականն յեմ. կերպաւորէ. փոխարկմամբ. յիմ. յեմ. յում կամ յամ»²¹:

Այս հեղինակը ևս կարծում է, թե կրավորական սեռի բայերից կարող են կազմվել ներգործական սեռի բայեր:

Եթե վերջավորութիւններէ ալիսպիսի հակադրութեան վրա հիմնվող բնորոշումը որոշ չափով հասկանալի է դարձնում ներգործական և կրավորական սեռերը ձևական կողմից, ապա այն ոչ մի որոշակիութիւն չի կարող մտցնել շեղոք սեռի բայերի ըմբռնման մեջ. մանավանդ որ այնտեղ չկա հակադրութեան համապատասխան զուգահեռը, և միաժամանակ շեղոքի՝ ըստ վերջավորութիւնների բնութագիրը չի կարող կրավորաձև շեղոքների մասին ոչինչ ասել: Մինչդեռ Ոսկանն ալիսպես է սահմանում. «Չեզոքական է, որ յեմ. կամ յում. կամ յամ. վերջանայ. և յիմ ոչ փոխարկի կրաւորականն. որզան զարթնում, ննջեմ, մոռանամ»²²: Ոսկանը (հետո նաև Կոստանզուպուսեցին և Արզումանեցին) ուղղում է Գալանոսի մի սխալը. նկատում է, որ ներգործական սեռի բայերը լինում են նաև ա լծորդով, օրինակ՝ Բառնում:

Թերևս շեղոքի կամ Գալանոսի «ձայնակրական» կոչածի հակադրութեամբ է նա ընդունում «Իրացրեկենլի» «սեռը», որը «յիմ վերջանայ և յեմ ոչ փոխարկի. և ունի նշանակութիւն, իւր (») արտագործականի. ո՞րզան. խօսիմ. տանիմ. սկսանիմ»²³: Այստեղ նշենք, որ Ոսկանի սահմանման և փաստերի միջև կա հակասութիւն: Նորա կարծիքով «Իրացրեկենլի» բայերը ձևով կրավորական են. բայց իմաստով՝ ներգործական, այսինքն՝ կրավորաձև ներգործական բայեր, որոնք և առանձնացված են՝ կրավորաձև շեղոքի հակադրութեամբ: Սակայն իրականում Ոսկանը սխալվում է, քանի որ խօսիմ, սկսանիմ, տանիմ կարող են արտահայտել նաև կրավորական իմաստ, այսինքն՝ կրկնասեռ բայեր են, որոնք այլ քերականներ (Ավետիքյան, Բագրատունի, Չամչյան, Այտրնյան և ուրիշներ) անվերապահորեն գնում են հասարակ բայերի շարքը: Հասարակ և «Իրացրեկենլի» «սեռերը» բնութագրելիս Ոսկանը հաշվի է առնում նաև նշանակութիւնը. «Իրացրեկենլի»-ն ունի կրավորական (իմ) վերջավորութիւն, բայց «զնշանակութիւն իւր արտագործականի», հասարակը՝ «վերջանայ յիմ և ոչ փոխարկի յեմ և ունի արտագործականի և կրաւորականի զնշանակութիւն»²⁴:

Ոսկանը սեռային իմաստներ է տեսնում նաև միադիմի բայերի մեջ, շնայած ինքն էլ է զգում, որ դա վերաբերում է միմիայն արտաքին կողմին. բուն միադիմի բայերն ունեն ներգործական ձև, իսկ ֆունկցիոնալները՝ կրավորական. «Որք բառից անդամաւորաց քանի՞ք են: Երկեակ: Արտագործական ձայնի. որ իյէ վերջանայ. հի՞կէն. պարտէ. դէպէ. ըմբոնէ. Կրաւորական ձայնի. հի՞զան. սիրի. ատի»²⁵:

Ոսկանի մոտ կա նաև բայերի իմաստա-սեռային մի անսովոր բաժանում, որը բայի և նրա առանձնահատկութիւնների ըմբռնման մեջ որևէ արժեք չի ներկայացնում: Բայց այդտեղ, թեպետ այլ տեսանկյունից, տրված է ներգործական, կրավորական և մասամբ շեղոք սեռերի քերական-նական-իմաստային նկարագրութիւնը: Բայերը բաժանելով վեց խմբի՝ նա բացատրում է. «Բայ էական է որ զիրակութիւն ելոյ նշանակէ. որզան. եմ. ես. է. Գոմ. գոս. գոյ: Բայ կայական է, որ զիրակութիւն կալոյ բացատրէ. ո՞րգոն կամ. կաս. կայ, մնամ. մնաս. մնայ, կայանամ: Բայ ներգործական է որ զիրակութիւն իւր ոչ արտազեղու առայլս, այլ ինքեան մնայ. հի՞զան. ուրախանամ. տրտմիմ: Բայ արտագործական է. որ առ այլս արտազեղու զիրակութիւն իւր. հի՞. կէն. զանեմ, պատժեմ. այրեմ: Բայ կրաւորական է. որ զարտահեղեալ զիրակութիւն յինքն կրէ. հի՞րար. գանիմ. պատժիմ. այրիմ: Բայ տուողական է. որ զընձեռումն ումեմն միւսոյն նշանակէ: Ո՞րզան. տամ. նուիրեմ. ընձեռեմ. շնորհեմ»²⁶: Այստեղ ուշադրութեան արժանի են «ներգործական», «արտագործական» և «կրաւորական» խմբերը, որովհետև այդ անվանումների տակ փաստորեն ներկայացրել է բայական երեք սեռերը՝ շեղոք (ոչ լիովին), ներգործական և կրավորական. ըստ այդմ շեղոք (անվանում է ներգործական) բայերի ցույց տված գործողութիւնը չի անցնում այլ առարկայի, այլ մնում է սուբյեկտի մեջ. ներգործականներինը (ինքն անվանում է «արտագործական») անցնում է «արտազեղու» այլ առարկայի, կրավորականներինը՝ ուրիշի

²¹ Ոսկան, Քերականութեան գիրք, Ամստերդամ, 1666, էջ 20—21:

²² Ոսկան, նույն տեղում, էջ 21: «Մոռանամը» շեղոք չէ, այլ ներգործական: Ձևակերպումից ստացվում է, որ, կարծես, սրանք կրավորական էլ ունեն:

²³ Ոսկան, նույն տեղում, էջ 21:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, էջ 19:

«արտահանված» գործողությունն է, որ կրում է իր վրա ենթական, Խեբ այս մտքերը հստակորեն չեն ձևակերպված, բայց վկայում են բայական սեռի՝ Ոսկանի ըմբռնման մասին: Խեբն այս խմբավորման փաստն է պատճառը, որ դրանից թիչ հետո բայերի սեռը քննելիս՝ Ոսկանը, գուցե չկրկնելու նպատակով, հիշյալ երեք սեռերը բնութագրում է ըստ ձևաբանական հատկանիշների, առանց նշանակությունների մասին խոսելու:

Ոսկանը սխալվում է մի քանի բայերի սեռը որոշելիս: Այսպես, ներգործական սեռի զգնում, ընթեռնում, կասում, կրկնասեռ խոկամ, լամ, ողբամ բայերը համարում է շեզոք սեռի:

Գալանոսն առաջին անգամ (ապա նաև Արզրումեցին) առանձնացնում է բայի «անցողական սեռ»: Սակայն նա այդպես անվանում է ոչ թե անցողական սեռագասը, այլ պարզապես պատճառական բայերը, որոնք, իհարկե, ցույց են տալիս անցողական գործողություն: Գալանոսը բացատրում է, որ անցողական այն բայն է, որ «նշանակ է ըզներգործութիւն անցեալ յայլս»²⁷:

Սրանց կազմության սկզբունքը Գալանոսը սխալ է հասկացել: Նա չի նկատում ոչ (չեշտակորոյս ուց) և ներկայի հիմքում հանգես եկող ան ածանցները, այլ կարծում է, որ պատճառական բայերը կազմվում են ցանեմ-ով. «Անցողականն» է որ անգի իցանեմ ներգործական»²⁸: Նա միաժամանակ ենթադրում է, թե պատճառական բայերը կրավորաձև չեն լինում:

ИЗ ИСТОРИИ ГЛАГОЛЬНЫХ ЗАЛОГОВ АРМЯНСКОГО ЯЗЫКА

В. Ш. ЦАРУКЯН

Р е з ю м е

Грамматисты 17-го века обращали серьезное внимание на изучение залогов древнеармянского языка. Не имея общего определения глагольного залога, они отдельные залогов характеризуют то по формально-морфологическим, то по морфологическим и грамматико-семантическим признакам.

Грамматисты считают, что в грабаре все страдательные глаголы переходят в действительные, поэтому для некоторых времен искусственно создают пассивные формы и признают различные залогов (действительный, страдательный, средний и общий). Галанос добавляет *ձայնակրական* (средний, но по форме пассивный) и переходный, для каузативных глаголов: Воскан различает «зalog» *իրացրեցնելի*, имея в виду некоторые двузалоговые глаголы *խօսիմ* и др.).

²⁷ Գալանոս, նույն տեղում, էջ 55:

²⁸ Նույն տեղում: